




Ս. ԳՈՒԱՆՋՅԱՆ

ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ*

5. ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԱՆԴԱՊԱՀ-
ՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԼԱՏԻՆԱՄՈՒԹՅԱՆ ԴԵՄ
(1692—1727 թ. թ.)

Պատմական փաստաթղթերը վկայում են, որ այս շրջանում կաթոլիկության հարած հայերի մեջ ևս խաղաղ միասնություն չի եղել։ Ապացուցվում է, որ Տրանսիլվանիայում կաթոլիկություն ընդունած հայերի մեջ գոյություն է ունեցել երկու թև։ Դրանցից առաջինը իբր իրեն գերագույն գլուխ ընդունելով հանդերձ Հռոմի պապին, ձգտել է ամենայն սրբությամբ պահպանել հայրենի հաղարամյա ավանդություններն ու սովորությունները։ Իսկ մյուս թևը, որը աշխուժացավ ԺԸ և հատկապես ԺԹ դարերում, վարել է լատինամոլ քաղաքականություն։ Հոգևորականության մի մասը ցանկանում էր լատին եպիսկոպոսին սիրաշահելով նրանից աստիճանի բարձրացում ստանալ և թոշակ ասպհովել, մի բան, որը հայածես կաթոլիկ հոգևորականությանը բացառված էր։

Խիստ ուշագրավ է կաթոլիկության հարած մի խումբ հայ եկեղեցականների կողմից 1692 թվականին Տրանսիլվանիայի վերին կառավարությանը ուղարկած գրությունը։

Այդ գրությունից երևում է, որ հայերին հարց էր տրվել, թե ի՞նչպես պետք է հասկանալ Ջուրջովի դաշնագրության մեջ իրենց կողմից գրված «մեռ հայրենական հավատովն» հայերեն խոսքերը։ Հայ եկեղեցականները հետևյալ ձևով են պատասխանում. «Մենանք մեր նախնիներուն օրինացը քով։ Այսինքն, պահենք այն պահքի օրերը, մսեղեն կերակուրները, տոները, եկեղեցական երգերը, այն հին տոնացույցը, եկեղեցական հագուստները և քահանաները, որոնք իբրև ժառանգություն մեր պապերեն մնացած են։

Մենանք ասոնց մեջ ամենեն խիստ կերպով Ո՛չ տեղը, ո՛չ ժամանակը չստիպեն զմեզ, ասոնց մեջ նույնիսկ ամենեն պզտիկ փոփոխությունն ընելու։ Արդեն այսպես պահեցինք զասոնք մինչև ցայսօր, այսպես պահեց ու կպահե զասոնք մեր եպիսկոպոսը՝ գերապայծառ Ավքսենտիոս Վրզաբյան։ Ու նույնիսկ Հռովմա Սրբազան Քահանայապետին հրամանը՝ համարձակություն չտվալ իրեն որ զմեզ որե՛կ կերպով ասոր հակառակն ընելու ստիպե»¹³⁴։

Վերոհիշյալ մեջբերումից ակնհայտնի է, որ Հռոմի պապը ղեմ է եղել Տրանսիլվանիայում կաթոլիկացած հայերի մոտ հայրենի

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից, 1965 թվականի № Ա-ից և 1966 թվականի № Բ-ից։

¹³⁴ Հ. Գ. Գովրիկյան, «Հայք յնդիսարեթուպոլիս», Բ, էջ 144։

սովորությունների պահպանմանը, սակայն Վրդարյանը համարձակություն չի ունեցել այդ հրամանը գործադրելու, քանի որ նա շատ լավ գիտեր, որ հակառակ դեպքում իր քարոզչական բոլոր պլանները կարող էին տապալվել և նա առայժմ հաշտվել էր, որ պահպանվեն հայկական ավանդությունները: Նա լավ ըմբռնելով տեղական պայմանները, բռնել էր հայերին աստիճանաբար համոզելու ուղի:

Վերոհիշյալ գրության շարունակության մեջ ասվում է նաև այն մասին, որ իրենք հարել են կաթոլիկությանը և արել են զիջումներ, և որոնք սակայն անցյալում իրենց պապերի կողմից չէին գործադրվել: Քիչ քիչ կիսոստովանինք միանգամայն և զայն, որ մենք հաջորդները՝ մեր բարի կամոքն և միայն անոր համար խոստացանք, որ չըլլա թե Հռովմեական Սրբազան Պապին և յուր Սուրբ Եկեղեցվույն հետ ընդդիմադարձության մեջ գանք: Այսինքն՝ որ քահանաները՝ սկիհին մեջ քանի մը կաթիլ ջուր դնեն: Դարձյալ՝ որ Աստուծոմե ամենեն ավելի փառավորված Հռովմեական Սրբազան Քահանայապետն՝ իրեւ բոլոր Եկեղեցվույն գլուխը հարգենք, և տոնական օրերու աղոթքներուն մեջ զինքը հիշենք: Եվ միայն անոր համար խնդրեցինք իրմեն եպիսկոպոս:

Ամեն հոս հառաջ բերվածները կատարեցինք ու կկատարենք ալ, թեպետև մեր ճախնիները չկատարեցին ու չպահեցին (ընդգծումը մերն է—Ս. Ք.): Ուստի մենք ճշմարտությունը կհայտնենք...»¹³⁵ Հետաքրքրական է, որ հիշյալ գրության մեջ քրիստոնեական թվականի կողքին օգտագործված է նաև Հայկական թվականը: Հայկական թվականը գտնում ենք Տրանսիլվանիայի հայկական ձեռագրերում, օգտագործված նաև ԺԸ դարում:

Խիստ ուշագրավ է նաև այն, որ Տրանսիլվանիայի հայերը, ինչպես գրում է Դեմ. Դանը, թեև միացած լինելով հանդերձ լատին Եկեղեցու հետ, այդ շրջանում դեռևս պահպանում էին իրենց ավանդական սովորությունները. այսպես «պատարագի մեջ իրենց արեւելյան Պատրիարքը (կաթոլիկոսը—Ս. Ք.) կհիշեն, և ոչ զՔահանայապետն Հռոմա, Մենդյան և Հայտնության տոնը միևնույն օրը կտոնեն, նաև տղոց հաղորդություն կուտային և վերջապես կուսանաց միայն տարին երեք անգամ եկեղեցի երթալ

թույլ կուտային»¹³⁶ Հովհաննես Անեցիի (իմա՝ Հ. Գ. Գովրիկյան) իր մի հոդվածում անդրադառնալով Դանի վերոհիշյալ տողերին, հաստատում է նրանց շեմարտացիությունը, գրելով. «ասոնք ստույգ են»¹³⁷: Նույն Գովրիկյանը սակայն հիշյալ հատվածը գրեթե բառացի մեջ բերելով իր Եղիսաբեթուպոլսի հայերի պատմության և հատորում, Դանի կողմից իր վկայակոչած վերոհիշյալ տողերը, ինչպես նաև իր ցույց տված հավանությունը այդ մասին, դուրս է թողել¹³⁸:

Հայոց կաթոլիկոսի անվան հիշատակությունը Տրանսիլվանիայի կաթոլիկացած հայերի կողմից հաստատվում է նաև ձեռագրերի հիշատակարաններով: Նույն ինքն Օգսենտ Վրդերեսկուի կողմից Ջուրջուվում 1690 թվականին գրված Մուղդավայի երեք քաղաքների կտրիճների կանոնադրության մեջ, ինչպես տեսանք, հիշատակվում են թե՛ Հռոմի պապի և թե՛ հայոց կաթոլիկոսի անունները: Սակայն այս Վրդարյանի կողմից փաստորեն Մուղդավայի հայերին կաթոլիկության մղելու դիտավորության մեր արված: Դարձյալ Ջուրջուվում 1690 թվականին գրված մի ժողովածուում, որը պահվում է այժմ Վիեննայի Մխիթարյան մատենադարանում¹³⁹, հիշվում է, սակայն, միայն Հռոմի պապը: Ուշագրավ է, որ նույնիսկ Վրդարյանի կողմից ձեռնադրված Ակոբ քահանայի կողմից Տրանսիլվանիայի Բրաշով քաղաքում 1710 թվականին արտագրված Մաշտոցում պապի հետ դարձյալ հիշվում է հայոց կաթոլիկոսը, թեև առանց նրա անունը տալու: Հավանաբար գրչին անժանոթ է եղել այդ ժամանակվա հայոց կաթոլիկոսի անունը: Հիշյալ ձեռագիրը մենք տեսել ենք 1948 թվականին Գեոլայում¹⁴⁰:

Հայկական հինավուրց ավանդությունների պահպանմանը վերաբերող ուշագրավ փաստ է Գեոլայի հայ կանանց ընդվզումը լատին հոգևորականների դեմ: 1715 թվականին Վրդարյանը մահանալով, երբ նրա հաջորդի հարցը հնարավոր չեղավ հայերի միջև լուծել, լատին հոգևորականները գալով Գեոլա ուզում են միջամտել հայերի ներքին գործերին: Սակայն նրանց մուտքը հայոց եկեղեցի արգելվում է գեոլացի հայ կանանց

¹³⁷ Հովհաննես Անեցի, «Գրիգորեան տումարը յդիսաբեթուպոլիս», «Հանդէս ամսօրեայ», 1891, № 10, էջ 301:

¹³⁸ Հ. Գ. Գովրիկյան, «Հայք յդիսաբեթուպոլիս», Ա, էջ 230:

¹³⁹ Հ. Հ. Տաշյան, «Ծուցակ ձեռագրաց», էջ 845:

¹⁴⁰ Ս. Քալաշնյան «Ծուցակ հայերեն ձեռագրաց Գեոլա հայաքաղաքի» (անտիպ):

¹³⁵ Հ. Գ. Գովրիկյան, «Հայք յդիսաբեթուպոլիս», Բ, էջ 149:

¹³⁶ Դեմ. Դան, «Արեւելյան Հայք», էջ 35:

կողմից, որոնք փորձում են նրանց բարկոծել և բացագանչել ռումիններեն. «Nu trebuie la noi saccula saeculorum», այսինքն՝ «Մեզ պետք չէ լատին արարողություն», բանի որ լատին քննիչները հայերեն չգիտեին, իսկ իրենք էլ հունգարերենի դեռևս անտեղյակ էին¹⁴¹։ Հայ կանայք դիմել էին նման միջոցի, անշուշտ վախենալով, որ լատին հոգևորականները, բացի իրենց պարտադրված կաթոլիկությունից, եկել էին վերացնելու նաև հայկական հնավանդ ծեսերն ու արարողությունները։

Անհրաժեշտ է նշել, որ լատինամուլ հոսանքը զնալով ուժեղանում էր և օր-օրի սպառնում էր վերջ տալու հայկական հնագույն ավանդություններին և սովորություններին։ Այդ ակնբախորեն երևում է, եթե իրար հետ համեմատելու լինենք 1718 թվականին Եղիսարեթուպոլսում և 1727 թվականին էլ Գեոլայում ընդունված սահմանադրությունները։

Երբ Եղիսարեթուպոլսում հայերի մի մասը կրկին հայադավան էր դարձել, որոշվեց որ եկեղեցական ու բաղաբային վարչությունը մեկտեղ ժողովվելով մի կանոնադրություն հաստատի։ «1718 թվականի հունվարի 3-ին կամա-ակամա, սահմանադրություն մը հաստատեց Կերլայի մեջ սովորություն եղած օրինաց ու կանոնաց համեմատ»¹⁴²։

Երիսարեթուպոլսի մեծամեծները, հաստատելով գեղացիներին նմանվող կանոնադրությունը, ասում էին այն մասին, որ այժմ ժամանակները տարբեր են և պետք է մի կողմ թողնել հայրենի սովորությունները և հարմարվել ժամանակի հետ։ Նրանք բառացի գրում էին այսպես. «... զի պարտ է հաճոյանալ, վասն բաղամպիշղ ժամանակիս, յորոյ և մեք ասգրս հայոց կամք տառապեալ եւ ցրուեալ ի յերկրիս այսմիկ։ Վասն այսորիկ պարտ է մեզ թողուլ զհայրենական անպիտան սովորութիւնըն, քանզի և ժամանակս այլ վշղացեալ է, չէ որպէս ի ժամանակս նախնեացն մերոց։ Եւ վասն այսու պարտ է մեզ ըսդ կարողութեան մերոյ հանդուրժել եւ ըսդ կարողութեան հաւանիլ բանիցս յոր և հաստատեցաք իսկ. և եղաք ի զրի զհաստատեալսն Կէրլայու»¹⁴³։ Այս կանոնադրությունը չհարգողներին որոշվում էր պատժել և դատի տալով տուգանել 24 մաճարի դրամով (ֆլորին)։

Հիշյալ կանոնադրության մեջ դեռևս պահպանվում էին հայկական հին սովորություններից մի քանիսը. թույլ էր տրվում մատաղ անել, քահանային 1 մաճար դրամ տալով, հարսանիքի ժամանակ փեսայի մոտ թողնելով էր սուր ունենալ և թրի համար էլ դրամ չէր պահանջվում։ Նարոտը օրհնվում էր վճարման դիմաց, և այլն։ Եթե սակայն ուսումնասիրելու և համեմատելու լինենք 1727 թվականին Գեոլայում դրամարված ընդհանուր ժողովի կանոնադրության հոգվածները, որոնք վավերացվել էին, ինչպես Գեոլայի, այնպես էլ Եղիսարեթուպոլսի, Զուրաբի և Հայկական կոմպանիայի մեծամեծների կողմից—վերոհիշյալ 1718 թվականի Եղիսարեթուպոլսի կանոնադրության հետ, որը, ինչպես տեսանք, զրվել էր կաթոլիկության պահանջներին հարմարվելու ոգով, այնուամենայնիվ կարող ենք նկատել, որ նրա մեջ առկա եղող հին սովորությունները ևս արգելվել էին։ 1727 թվականին Գեոլայում ընդունված կանոնադրության մեջ մենք տեսնում ենք, որ մատաղ անողը նախ տուգանվում էր և ապա, կրկնելու դեպքում, արքունիում էր երկրից։ Կանոնադրության ԺԴ կետում ասված է. «Թէ օր մարդ տավար մօրթէ, վատ դիտաւորութեամբ հին սովորութեան գօրայ, թէ անով մեղաց թողութիւն պի գտնու, կամ թէ իւղ անուշ անէ, կամ մատաղ նայ, ունենայ ԺԲ մաճրի ճուրում տալու եկեղեցուն, ու թէ թարկը շիտայ, աս տաթինը, աս երկրէն արքորվի ու գուս ելէ»¹⁴⁴։

Մի այլ տեղում ասված է. «Զհարսը ալ շատ շի քօղին, փեսին ևս գտկին վրայ նալօտ չիդնին...», կամ «... փեսան թոօվ պսակ չերթայ ոչ օղկայ տեղ թոօվ քալէ»¹⁴⁵, և այլն։ Վերոհիշյալ կանոնադրությունը այնպիսի ժամանակ էր ընդունվում, երբ լատին եպիսկոպոսի հորդորներով նախապատրաստվում էր արքորի սպառնալիքով Եղիսարեթուպոլսում բնակվող կաթոլիկ հայերին բռնի կաթոլիկացնելու գործը։

6. ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ «ԱՆՀՆԱԶԱՆԴ» ՀԱՅՅԵՐԻ ԲՈՆԻ ԿԱԹՈՒԼԻԿՈՒՄԸ (1731 թ.)

Ինչպես նշեցինք, Տրանսիլվանիայի հայերի եպիսկոպոս Օրսենտ Վրզաբյանի մահից հետո, Եղիսարեթուպոլսի հայերը, որոնք դեռ ժէ դարի վերջին տասնամյակին հրաժարվելով կաթոլիկությունից կրկին վերադարձել էին Հայրենի Եկեղեցու գիրկը, շա-

¹⁴¹ Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլուանիոյ հայոց մետրապոլիսը», էջ 97։

¹⁴² Հ. Գ. Գովրիկյան, «Հայր յեղիսարեթուպոլիս», Բ, էջ 10—11։

¹⁴³ Անդ, էջ 16։

¹⁴⁴ Հ. Գ. Գովրիկյան, «Դրանսիլուանիոյ հայոց մետրապոլիսը», էջ 112։

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 113—114։

րունակում էին պահպանել իրենց դավանությունն և ազգային հին սովորությունները ու լուրջ վտանգ էին հանդիսանում կաթոլիկական քարոզչության համար, չափազանց կոշտ լավ զգալով, որ բովանդակ Տրանսիլվանիայի հայությունը կարող է ընկնել կրկին «հերձվածություն» մեջ, որովհետև է բռնի միջոցներով սպառնալիքով ընդմիջող վերջ տալ տիրող այս անորոշ դրությունը:

1731 թվականի մարտի 26-ին Եղիսաբեթուպոլսի 14 հայ մեծամեծների ստորագրությամբ գրված մի շրջաբերականով հայերին պարտադրվում էր կաթոլիկանալ, այլապես «անհնազանդներ»-ին սպառնում էին երկրից աքսորել: Ասված էր, որ թե՛ պաշտպանվողները (իմա՝ Եղիսաբեթուպոլսեցիները), թե՛ չորջուղիները, թե՛ սեպկիդցիները և թե՛ որտեղ հայեր գտնվեն Տրանսիլվանիայում, լատին եպիսկոպոսի հրամանով պետք է, որ հավաքվեն Գեուլայում, որպեսզի իրենց հավատի խնդիրը քննվի: Որոշվել էր նաև ամեն ինչ կարգի բերել, նոր տոմարը ընդունել և այլ պատշաճ կարգադրություններ անել: Հիշյալ շրջաբերականում ասված էր. «նայ ամպէս հասդատվի, որ չիլանք ամէնին ծիծաղ և ամէն ասգի. զէ մենք Առտալու հայերն զմեզ անվանելով եւ հռակելով, թէ ճշմարիտ ուղափառ ինք և ըզսուրբ Հրօմայ Եկեղեցոյ հրամանը կատարելոց եմք...»: Ենթադրաբար շրջաբերականում մեջ ասված էր, որ հակառակ դեպքում, «Եւ որն օր չի հնազանդի հրամանին և գրուս, զանպիսին աքսորվի դայս երկրէս. որպէս կայ այլ վաղուցու գրէրուն մէջ»: Դեմ եղողները պիտի պատժվեն, առին անգամ քառասուն հունգարական ֆլորին տուգանք պիտի վճարեն, իսկ երկրորդ անգամ ոչ միայն իրենց բնակած քաղաքից, այլև երկրից պիտի աքսորվեն¹⁴⁶:

Շրջաբերականից երևում է, որ կաթոլիկության վերջնական ընդունումը պարտադրվել էր պապի կողմից, որ Գեուլայում Տրանսիլվանիայի բոլոր հայերին ժողովի կանչող և նրանց հավատի հարցերը քննարկողը եղել է Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոս Գեորգ Բարո Ջարգերը (վերոնշյալ շրջաբերականում գրված է՝ Զէրկէլ Կէրկէլ): Այս հրամանագրի վրա գրված է եղել հետևյալ խորագիրը. «Միաբանութիւն վասն հաւատոյ և կանոնաց Հայոց ասգին, որ ամէն մէկն հական լինի»: Այն ստորագրող 14 հայ մեծամեծների թվումն են հայ ընկերության պիրովը (դատավորը), Եղիսաբեթուպոլսի եկեղեցականը, իսկ վերջում ստորագրել է «Ես

Սարըսդան Հանգօյ, զիմ ծէրէրօվըն»: Այս գրությունից երևում է նաև, որ կաթոլիկության հարող հայերը պետք է, որ ստորագրեն, հակառակ դեպքում նրանք պիտի աքսորվեն երկրից: Սույն հրամանագրից հայտնի է դառնում նաև, որ անցյալում ևս կաթոլիկության դեմ պայքարող հայերին հրամայվել է երկրից աքսորել, սակայն մեզ հայտնի պատճառներով մինչև հիշյալ ներկա հրամանագիրը որևէ արդյունք չէր ստացվել: Այժմ Ապաֆինները չկային արդեն, Տրանսիլվանիան կայսրության բաղկացուցիչ մասն էր և լատին քարոզչությունը մեծ ուժ էր ներկայացնում: Ինչպես նշում է Գովրիկյանը, «ամենն վերջինները եղան եղիսաբեթուպոլսեցիք, որոնց ետքի մասն ալ ընդունեցաւ ուղղափառութիւնը, տերութիւն հորդորելովն 1731-ին»¹⁴⁷, նույն Գովրիկյանը գրում է, որ «Այս շրջաբերական թուղթն ունեցաւ իր բաղձացած հետեանքը: Եղիսաբեթուպոլսի, իրեն եկեղեցական իրավասութիւն ներքեւ եղող գյուղերով, ընդունեցաւ կաթոլիկե հավատքը: Ասոր վրա փոխեց նաև տումարն ու ընդունեցաւ նորը»¹⁴⁸, Անհրաժեշտ է սակայն նշել, որ Եղիսաբեթուպոլսի նույն պատմաբանի գործերի ուսումնասիրումը մեզ բերում է այն համոզման, որ ո՛չ հայերի լրիվ կաթոլիկացման գործը և ո՛չ էլ նոր տումարի ընդունումը հեշտորեն տեղի չեն ունեցել, այլ հանդիպել են երկար ու համառ դիմադրության: Այդ մասին են վկայում Կարոլոս կայսրի 1726 և 1733 թվականների օգոստոսի 11-ին և Մարիա Թերեզա կայսրուհու 1758 նոյեմբերի 28-ին Եղիսաբեթուպոլսի հայերին տված հրամանագրերի այն կետերը, որոնք վերաբերում են Եղիսաբեթուպոլսում ապրող ոչ կաթոլիկներին: Մարիա Թերեզա կայսրուհին դեռևս 1758 թվականին, պահպանելով իր նախորդի սահմանած հոգվածք, հրամայում էր. «... Եւ որովհետեւ Դրանսիլվանիո հռոմեական ուղղափառ լատինածես եկեղեցական իշխանութեանն կկախվին (իմա՝ հայերը) ու պիտի կախվին, անոր համար եկեղեցական վարչության պարտավորությունն ըլլա հակել, որ ճոճ հայ հռոմեական կաթոլիկե առաջնորդութիւնն ըստ պատշաճի պահպանվի (ընդգծումը մերն է—Ս. Ք.), և արեւելյան հայ հերձվածողը, հանվանե Եվտիքականք ու Դիոսկորյանք և ուրիշներուն դատապարտյալ մոլորություններն այս ազգն հեռու ըլլան: Ասկից զատ այս եկեղե-

¹⁴⁶ Հ. Գ. Գովրիկյան, «Հայք յԵղիսաբեթուպոլիս», Բ, էջ 165—166:

¹⁴⁷ Ա. Փիլաս, «Հանդէս ամսօրեայ», 1899, էջ 50:

¹⁴⁸ Հ. Գ. Գովրիկյան, «Հայք յԵղիսաբեթուպոլիս», Բ, էջ 168:

ցական իշխանությունը մեծապես հոգ տանի՝ որ չըլլա թե այս մասնավոր ու նվազ ճանչցված աստվածային պաշտամունքը Դրանսիականի իշխանության մեջ ուղղափառ շեղող հայերուն կերպով մը ներվի, կամ վերը հիշված մոլորությանց ետևեն եղողները ներս թողվին և կամ անոնց հոն բնակելուն աչք գոցվի...»¹⁴⁹

Այսպիսով պարզ է, որ դեռ 1758 թվականին տրված հրամանագրում խոսք էր լինում Տրանսիվանիայում «ուղղափառ շեղող», այսինքն՝ ոչ կաթոլիկ հայերի մասին և արգելվում էր նրանց կրոնական պաշտամունքը կատարելու՝ Նույն հրամանագրով արգելվում էր նաև հայերի մուտքը երկրից ներս՝ Արտոնվում էր միայն հայ վաճառականներին, այն էլ մի քանի օրով, անցնել Տրանսիվանիայից:

Ուշագրավ է, որ դեռևս 1758 թվականին, ոչ կաթոլիկ հայեր են եղել Տրանսիվանիայում, այլապես վերոհիշյալ հրովարտական այդ հարցի մասին խոսք չլիներ անհրաժեշտություն չէր զգացվի Պարզ է, որ ելնելով Ավստրիական կայսրության հետ կատարած իրենց խոշոր գործարքներից, 1731 թվականին հայերի բռնի կաթոլիկացման հրամանագիր էին ստորագրել հայ գաղութի մեծամեծները, իսկ հայ աշխատավոր ժողովրդական զանգվածները դեռևս չէին հրաժարվել կաթոլիկության դեմ մղած իրենց պայքարից և համառորեն հավատարիմ էին մնացել իրենց ավանդություններին և սովորություններին:

Հռոմեական նոր տոմարի ընդունման հարցը ևս շատ մեծ ընդդիմության տեղիք էր տվել Նդիսաբեթուպոլսում ԺԸ դարի երկրորդ կեսի սկզբում, որի մասին կխոսենք քիչ հետո:

1768 թվականին, տեղի ունեցող ռուս-թուրքական պատերազմի հետևանքով դարձյալ Մուղովայից 400 հազար ստիպվեցին գաղթել Տրանսիվանիա և հաստատվել Սեպվիդում: Ահա թե ի՞նչ է գրված այդ գաղթականության մասին Նդիսաբեթուպոլսի մկրտության մայր մատյանի Բ հատորի վերջում. «Յամի Տեառն 1768, ի վրդովիլ խաղաղութան յերկիրն Մուլտավիդ, վասն պատերազմին, որ էր ի միջ տաճկաց և մոսկովից: Եւ զի ոչ գոյր անդ տեղի ապաւինի, բազումք ի բնակչաց անտի փախստեայք անցին, ըստ սոցին օրինակի նաև հայք իբր շորեք հարիւր փախուցեալ եկին մտին ի սահմանս գաւառիս մերոյ Դրանզիվանիոյ և զտեղի կալան

ի դիւզն Սիբվիդոյ...» Նույն հիշատակագրության շարունակության մեջ ասված է, որ իբր եկվորները դիմում են Նդիսաբեթուպոլսի հոգևոր վարչությանը՝ կաթոլիկություն ընդունելու նպատակով: Գնացել է Հոհաննես Գրեշունի Լուսիկյան կոչված Նդիսաբեթուպոլսի հոգևոր հովիվը մի քահանայի հետ. հիշատակագրի ասելով, «Թերևս շնորհի Տեառն ի հերձուածողութենէ առ լուսաճաճանչ և քրիստոսաւանդ ուղղափառ հաւատն դարցին»։ Սակայն նույնինքն գրում է, թե ինչպիսի շնչին արդյունքի է հասնում, մեկ ամսվա ընթացքում 400 հայերից կաթոլիկացնելով միայն 7 հոգու, և որոնք էլ համարյա 3 ընտանիքի անդամներ էին՝ նա գրում է. «Եւ ըստ տկարութեան մերոյ ոչ կարացաք զայլ ինչ շահիլ, եթէ ոչ զներքոյ գրեալ եօթն հոգիս, զորոյ արդիւնս ի Տեառնէ սպասեմք»¹⁵⁰: Այս տողերը ինքնին ապացուցում են, թե ո՞րքան կեղծ էին այն խոսքերը, որ իբր եկվոր հայերը իրենք են հրավիրել քարոզչին կաթոլիկություն ընդունելու համար: Սա արդեն կաթոլիկ քարոզչության համար կատարյալ սնանկություն էր՝ Հավանական է կարծել, որ խաղաղության հաստատումից հետո, գաղթող հայերի մեծ մասը դարձյալ հետ պետք է որ վերադարձած լինի Մուղովա:

Անշուշտ կաթոլիկական շրջապատում ավելի մեծ վստահություն չահելու և լատին կղերի հայերի նկատմամբ ցուցաբերած անվստահությունը մեղմելու նպատակով էր, որ 1740 թվականին և 1741 թվականին երկու անգամ Կլուժում լույս ընծայվեց հայագետ հիսուսյան վարդապետ Հակոբ Վիլոտի (1743 թ.) լատիներեն մի աշխատությունը՝ նվիրված քրիստոնյա Հայաստանին, որն ընդգրկում էր նաև մի ցանկ հայ թագավորների և կաթողիկոսների, ինչպես նաև հայերի դավաբանական «սխալներ»-ի մասին: Այս գործում էլ առաջ էր քաշվում այն անհիմն կարծիքը, ըստ որի հայ թագավորներից և կաթողիկոսներից շատերը ի սկզբանե իբր կաթոլիկ են ձգել և պապի հավատարիմ: 1741 թվականի հրատարակության մեջ կա մի ձոն՝ գրված Սեկելի Յոաննեսից, ուղղված Նիկոլաուս Դանիելին, որը Գեռլայի ժողովրդապետն էր այդ ժամանակ և հավանաբար նա է եղել, որ հոգացել է երկու տպագրությունների էլ ծախքը¹⁵¹:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 173—174:

¹⁵¹ Հիշյալ երկու հրատարակությունները Կլուժի ռոմանական ակադեմիայի մասնաճյուղի գրադարանում հայտնաբերել է բազմավաստակ բանասեր Զ. Ժ. Սիրունին:

¹⁴⁹ Զ. Գ. Գովիկյան. «Հայք Նդիսաբեթուպոլսի», Բ, էջ 267—268:

Այսպիսով, միայն բռնի ուժի, այսինքն արքայի սպանության միջոցով էր, որ ջլատվեց Հայրենի Եկեղեցու գիրկը կրկին վերադարձած Եղիսարեթուպոլսի և այլ վայրերի հայերի դիմադրությունը։ Սակայն սխալ է կարծել, որ 1731 թվականին արդեն Տրանսիլվանիայի բոլոր հայերը բռնի կաթոլիկացվել էին։ Քննարկված փաստերը ցույց են տալիս, որ դեռ շատ ավելի ուշ, անգամ ԺԸ դարի երկրորդ կեսերին, Տրանսիլվանիայում դեռևս մեծ պետք է լինեի հայադավան հայերի թիվը։ Սակայն, անգամ հայերի լրիվ կաթոլիկացումից հետո, գաղութի առաջավոր զավակները անընդմեջ պայքար են մղել իրենց ազգային ինքնությունության պահպանման համար։ Այս բոլորը հաճախ դրսևավորվել է մի կողմից նոր տոմարը մերժելու, իսկ մյուս կողմից, մանավանդ հայոց ազգային եպիսկոպոսությունը վերականգնելու համար մղված համառ ու երակարատև պայքարով։

7. ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԱՆԴԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՄ (1690—1759 թ. թ.)

Հայ ավանդապահների և լատինամոլների պայքարը ուժեղ կերպով դրսևորվեց նաև նոր՝ Գրիգորյան տոմարը ընդունելու կապակցությամբ։ Լ. Գ. Գովրիկյանը գրում է, որ «կերպարներ եղան առաջիններն, որ չէին միայն կաթոլիկ կրոնին, հապա նաև նոր տոմարն ընդունեցան։ Թե երբ՝ չենք գիտեր։ Բայց շատ հավանական է, որ Ավստրիայի Վրդարյանին ատեն (1684—1690)»¹⁵²,

Այսպիսով հավանական է կարծել, որ նշված ժամանակաշրջանում Վրդարյանը Զուրջով և Բիստրիցա քաղաքներում հաստատված հայերի մոտ և գոնե իր հիմնադրած Գեոլա հայաքաղաքում գործադրության մեջ էր դրել նոր տոմարը։ Սույն կարծիքի օգտին է խոսում նաև հետևյալ փաստը։ Վիեննայի Մխիթարյան մատենադարանում է պահվում դեռևս 1690 թվականին Տրանսիլվանիայի Զուրջով քաղաքում լատիններին գրված մի ձեռագիր՝ «Տոմար լաթինացեոց խորագրով»¹⁵³։ Այստեղից էլ պետք է հետևել, որ ԺԸ դարի վերջերին, ամենայն հավանականությամբ Տրանսիլվանիայի հայերի գեթ մի մասի մոտ արդեն իսկ կիրառվում էր նոր տոմարը։ Սակայն, ինչպես

հայտնի է, նույն ԺԸ դարի վերջում Եղիսարեթուպոլսի հայերի կարևոր մի մասը դուրս էր եկել կաթոլիկությունից, իսկ քաղաքի ամբողջ ազգաբնակչությունը չէր ընդունել նաև նոր տոմարը։

Ավելին. հետագա փաստը ապացուցում է նաև այն իրողությունը, որ Վրդարյանի մահից հետո նոր տոմարը, ինչպես նաև կաթոլիկական այլ նորամուծությունների մի մասը խափանվել էին ոչ միայն Եղիսարեթուպոլսում, այլև նույնիսկ Գեոլայում։ Ուշագրավ է, որ Ժանոթ մատենագիր Ստեփանոս Ռոշքան (1690—1739 թ. թ.) 1729 թվականի սեպտեմբերի 28-ին Գեոլա հայաքաղաքից Վենետիկ, Մխիթարյան Աբբային գրած իր մի նամակում, հայտնելով, որ Տրանսիլվանիա է եկել իր ազգականներին և բարեկամներին տեսության, գրում էր նաև, որ Գեոլայում եղբայրություններ հաստատելուց հետո, ձեռնամուխ է եղել նոր տոմարի հաստատմանը։ Ս. Ռոշքան իր այս ուշագրավ նամակում գրում է. «Ահա ես շնորհիվ Տեառն ապարտեցի զայցարարութիւն իմ աստի ի Հայաքաղաքն Կեոլայ... սահմանելով իմ զեղրայրութիւնս ոմանս աշխարհականաց, և տրամադրելով զեկեղեցական իրս, ամենեցուն հաւանութեամբն ի յերկրիս՝ թէ՛ կղերց և թէ՛ ժողովրդականաց՝ հաստատեցաւ նոր Տոմարն Հռոմէական, որպէս զի ոչ միայն Զատիկն, այլ և այլ հանդիսատարագոյն տօներն, ևս առաւել Սրբոց Առաքելոցն միշտ ըստ Հռոմէականին շրջեցնին, զոր ինքնին շարագրեցի (թէպէտ [յ]առաջագոյն ունէի զբազում ինչ ի պատրաստի) զխրատս, այսինքն Ռուպրիգաս, զաղիսակս և զտօնացոյցն ինքն, բայց անխախտ պահելով զՄէսն մեր։ Զի անհնարին է ազգիս մերոյս. այլ՝ աստանօր այլապէս պահել, մանաւանդ զի և բոլոր ազգն Մաճառաց, թէ՛ հոգևոր և թէ՛ յաշխարհական կարգէն, զայս Տոմարս ամենեկին կամին։ Եւ ի սոցանէ, նաև յիմրերատօրէն ինստանցեալէս առ Սուրբ Առաքելական Աթոռն մերայինքս, և սոքա ևս ընդունելուց են. վասն որոյ յուսամք զերջանիկ ելս նորին։ Հոգացայց, զի այդանօր ի Վէնէտիկ ծախիւր ժողովրդեանս այսորիկ տպեցի. միայն թէ՛ Սուրբ Աթոռն ակն արկցէ։ Զորմէ ես յետոյ ոչ հեղաքացայ Գերանձնութեանդ զեկուցանել յերկրէ իմմէ, քանզի և մեք չհացիքս ոգով չափ բաղձամք տեսանել զայսպիսի տօմարն»¹⁵⁴։

(Նառունակի)

¹⁵² Լ. Գ. Գովրիկյան, «Հայք յեղիսարեթուպոլիս», Բ, էջ 142։

¹⁵³ Լ. Լ. Տաշյան, «Ծոցակ ձեռագրաց», № 393, էջ 845։

¹⁵⁴ Լ. Ղ. Տաշյան, «Սուրբ դիւան», Վենետիկ, 1930, էջ 39։